ԵԴ1/1691/01/25
(ՀԿԴ/0277/01/25)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6 նոյեմբերի 2025 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ուսումնասիրելով թիվ ԵԴ1/1691/01/25 (ՀԿԴ/0277/01/25) քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին Հակակոռուպցիոն դատարանի՝ 2025 թվականի հոկտեմբերի 15-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2025 թվականի մայիսի 14-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում ստացվել է Ֆարիս Ջալելի Ալ-Մաշտայի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով թիվ 69117925 (ԵԴ1/1691/01/25) քրեական վարույթը:

1.1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր Ս.Գզոգյան) 2025 թվականի մայիսի 16-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/1691/01/25 քրեական վարույթը ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, 2025 թվականի հոկտեմբերի 8-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ԵԴ1/1691/01/25 քրեական վարույթն ըստ առարկայական ընդդատության Հակակոռուպցիոն դատարան ուղարկելու մասին:

3. Հակակոռուպցիոն դատարանը (դատավոր Վ.Ստեփանյան) 2025 թվականի հոկտեմբերի 15-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0277/01/25 (ԵԴ1/1691/01/25) քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի հոկտեմբերի 27-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Ֆարիս Ջալելի Ալ-Մաշտայի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքի համար, որ նա *«(…) [Մ]ի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ, իրավունք վերապահող պաշտոնական փաստաթղթեր կեղծելով և դրանք օգտագործելով, խարդախությամբ հափշտակել է «Հայբիզնեսբանկ» ՓԲ ընկերության (այսուհետ նաև՝ Բանկ) առանձնապես խոշոր չափերով գույքը:*

Այսպես.

Կարեն Խաչատրյանը, Բանկի վարչության նախագահի՝ 2008 թվականի հուլիսի 8-ի թիվ Կ 359-Ա հրամանի հիման վրա զբաղեցնելով հիշյալ ընկերության պլաստիկ քարտերի վարչության պետի պաշտոնը և ի պաշտոնե տեղեկացված լինելով, որ սեփական պրոցեսինգային կենտրոնը հիմնելու և դրա սպասարկումն իրականացնելու համար Բանկը 2011 թվականից սկսած համագործակցում է

Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում գրանցված «ԲՊՅ բանկային տեխնոլոգիաներ» ՍՊ ընկերության հետ, մասնավորապես՝ համագործակցության շրջանակներում Բանկի և «ԲՊՅ բանկային տեխնոլոգիաներ» ՍՊ ընկերության միջև կնքվել են մի շարք պայմանագրեր, և վերջին ընկերությունը կատարում է իր պայմանագրային պարտավորությունները՝ նպատակադրվել է նույնաբնույթ պրոդուկտների ձեռքբերման և ծառայությունների մատուցման պարզվակով, իրավունք վերապահող ակնհայտ կեղծ փաստաթղթեր կազմելու և օգտագործելու միջոցով, խարդախությամբ Բանկից առանձնապես խոշոր չափերի գումար հափշտակել, ինչի կապակցությամբ նախնական համաձայնություն է ձեռք բերել «ԲՊՅ բանկային տեխնոլոգիաներ» ՍՊ ընկերության աշխատակից Ֆարիս Ալ-Մաշրայի և ՌԴ Ուլյանովսկ քաղաքում հիմնադրված «Ագաթ» ՍՊ ընկերության գլխավոր տնօրեն Վյաչեսլավ Վառլամովի հետ:

Այնուհետև՝ 2014 թվականի մարտի 20-ին, Կարեն Խաչատրյանն իր աշխատանքային էլեկտրոնային փոստով Բանկի աշխատակիցներին ներկայացրել է Բանկի վարչության նախագահ Արսեն Միքայելյանին հասցեագրված՝ «Վարկային մոդուլի ձեռքբերման վերաբերյալ» զեկուցագրի նախագիծը, համաձայն որի՝ Բանկը «ԲՊՅ բանկային տեխնոլոգիաներ» ՍՊ ընկերությունից 80.000 ԱՄՆ դոլարով (ներառյալ՝ տեղադրման աշխատանքները) պետք է ձեռք բերեր հիշյալ մոդուլը:

Դրանից հետո, նախապես ծագած հանցավոր մտադրությունն իրականացնելու և Բանկին մոլորության մեջ գցելու նպատակով Ֆարիս Ալ-Մաշրան և Կարեն Խաչատրյանը վերջինիս աշխատանքային էլեկտրոնային փոստով, որը կարող էր վերահսկվել Բանկի կողմից, 2015 թվականի մարտից սկսած իրականությանը չհամապատասխանող նամակագրություն են վարել այն մասին, իբրև թե ձեռքբերվող վարկային մոդուլի տեղադրման աշխատանքներն իրականացնելու է «ԲՊՅ բանկային տեխնոլոգիաներ» ՍՊ ընկերության դուստր ընկերություն հանդիսացող «Ագաթ» ՍՊ ընկերությունը: Միաժամանակ, Ֆարիս Ալ-Մաշրան և Կարեն Խաչատրյանը նամակագրությամբ քննարկել են Բանկի և «Ագաթ» ՍՊ ընկերության միջև պայմանագրեր կնքելու պայմանները: Ավելին՝ Ֆարիս Ալ-Մաշրան 2015 թվականի մարտի 13-ին էլեկտրոնային փոստով բանկի աշխատակից Խաչիկ Մկրտչյանին տեղեկացրել է, որ «Ագաթ» ՍՊ ընկերությունն իբրև թե

հանդիսանում է «ԲՊՅ բանկային տեխնոլոգիաներ» ընկերության դուստր ընկերությունը: Այդ ամենի արդյունքում կասկածի տակ չառնելով պայմանագրերի կնքման անհրաժեշտությունը և հիմք ընդունելով դրանց կապակցությամբ Կարեն Խաչատրյանի նեղ մասնագիտական հիմնավորումները՝ Բանկի վարչության նախագահի կողմից հրահանգվել է սկսել «Ագաթ» ՍՊ ընկերության հետ կնքվող պայմանագրերի նախագծերի մշակման գործընթացը, ինչին, որպես նախաձեռնող, մասնակցություն է ունեցել նաև Կարեն Խաչատրյանը՝ ապահովով պայմանագրերում բովանդակությամբ կեղծ տեղեկություններ ներառելու հնարավորություն:

Դրանից հետո՝ 2015 թվականի մայիսի 22-ին, Բանկի և «ԲՊՅ բանկային տեխնոլոգիաներ» ՍՊ ընկերության միջև կնքվել է պայմանագիր՝ «SV-BOM-CRD Smart Vista Credit Card Modul»-ի ներդրման և կարգաբերման աշխատանքների կատարման վերաբերյալ, ինչի կապակցությամբ Բանկի կողմից «ԲՊՅ բանկային տեխնոլոգիաներ» ՍՊ ընկերությանը 2015 թվականի հուլիսի 8-ին և 2016 թվականի հունվարի 14-ին վճարվել է ընդհանուր 12.030.150 ՀՀ դրամին համարժեք 25.000 ԱՄՆ դոլար: Նույն օրը նույն աշխատանքները կատարելու համար մեկ այլ պայմանագիր է կնքվել Բանկի և «Ագաթ» ՍՊ ընկերության միջև, ինչի համար վերջին ընկերությանը բանկային փոխանցմամբ 2015 թվականի հուլիսի 8-ին և նոյեմբերի 19-ին վճարվել է ընդհանուր 81.418.232.6 ՀՀ դրամին համարժեք 170.000 ԱՄՆ դոլար: «Ագաթ» ՍՊ ընկերության հետ կնքված պայմանագիրը վերջին ընկերության անունից ստորագրել է ընկերության գլխավոր տնօրեն Վյաչեսլավ Վառլամովը, ինչպես նաև պայմանագիրը կնիքվել է «Ագաթ» ՍՊ ընկերության կնիքով: Հիշատակված երկու պայմանագրերի առարկաներն, ըստ էության, հանդիսացել են ծրագրային մոդուլների տեղադրման և կարգաբերման աշխատանքները, որոնք փաստացի ամբողջ ծավալով կատարվել են «ԲՊՅ բանկային տեխնոլոգիաներ» ՍՊ ընկերության կողմից, իսկ «Ագաթ» ՍՊ ընկերության հետ իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հավաստող և իրավունք վերապահող բովանդակությամբ ակնհայտ կեղծ պայմանագրի կնքումը և օգտագործումը հանդիսացել է միջոց՝ Բանկից առանձնապես խոշոր չափերի գումար հափշտակելու համար և այդ պայմանագրի շրջանակներում «Ագաթ» ՍՊ ընկերության կողմից որևէ աշխատանք չի կատարվել: Ընդ որում՝ Բանկին մոլորության մեջ գցելու,

կատարվածի կապակցությամբ կասկածներ չառաջացնելու և հետագայում բացահայտվելու հավանականությունը նվազեցնելու համար «Ագաթ» ՍՊ ընկերության հետ կնքված ակնհայտ կեղծ պայմանագրում պայմանագրի առարկաները նկարագրելիս օգտագործվել են «ԲՊՑ բանկային տեխնոլոգիաներ» ՍՊ ընկերության հետ կնքված պայմանագրում օգտագործված՝ մատուցվող ծառայությունները և կատարվող աշխատանքները նկարագրող բառերի հոմանիշները: 2015 թվականի նոյեմբերի 16-ին «Ագաթ» ընկերության և Բանկի միջև կազմվել է աշխատանքներն ամբողջ ծավալով կատարված լինելու վերաբերյալ իրավունք վերապահող հանձնման-ընդունման թիվ 11/16-1 ակնհայտ կեղծ ակտը, որը Բանկի անունից ստորագրել է Կարեն Խաչատրյանը, իսկ «Ագաթ» ՍՊ ընկերության անունից ստորագրել է ընկերության գլխավոր տնօրեն Վյաչեսլավ Վառլամովը, ինչպես նաև ակտը կնիքվել է «Ագաթ» ՍՊ ընկերության կնիքով, որը հանդիսացել և օգտագործվել է որպես միջոց՝ Բանկից առանձնապես խոշոր չափերի գումար հափշտակելու համար:

Նույն հանցավոր մտադրության շրջանակներում 2015 թվականի դեկտեմբերի 21-ին Բանկի և «Ագաթ» ՍՊ ընկերության միջև կնքվել է մեկ այլ իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հավաստող և իրավունք վերապահող բովանդակությամբ ակնհայտ կեղծ պայմանագիր՝ «Visa international և Master Card Worldwide»-ի սերտիֆիկացիաների նախապատրաստման և համապատասխանեցման աշխատանքների իրականացման վերաբերյալ, ինչի կապակցությամբ Բանկի կողմից «Ագաթ» ՍՊ ընկերությանը բանկային փոխանցմամբ 2016 թվականի փետրվարի 8-ին և ապրիլի 26-ին վճարվել է ընդհանուր 122.972.953 ՀՀ դրամին համարժեք 250.000 ԱՄՆ դոլար: «Ագաթ» ՍՊ ընկերության հետ կնքված պայմանագիրը՝ հիշյալ ընկերության անունից ստորագրել է ընկերության գլխավոր տնօրեն Վյաչեսլավ Վառլամովը, ինչպես նաև պայմանագիրը կնիքվել է «Ագաթ» ՍՊ ընկերության կնիքով:

2015 թվականի դեկտեմբերի 24-ին Բանկի և «ԲՊՑ բանկային տեխնոլոգիաներ» ՍՊ ընկերության միջև կնքվել է պայմանագիր՝ «ECOMMERECE»-ի և «YOUPAY»-ի հետ ինտեգրման, ներդրման, կարգաբերման և տեղայնացման աշխատանքների կատարման վերաբերյալ, ինչի կապակցությամբ նշված ընկերությանը 2016

թվականի հոկտեմբերի 6-ին վճարվել է 33.170.200 ՀՀ դրամին համարժեք 70.000 ԱՄՆ դոլար: Հիշատակված վերջին երկու պայմանագրի առարկաներն, ըստ էության, հանդիսացել են հաշվողական տեխնիկայի ծրագրային միջոցների և տեղեկատվական պրոդուկտի ադապտացիան ու մոդիֆիկացիան, որը փաստացի կատարվել է «ԲՊՅ բանկային տեխնոլոգիաներ» ՍՊ ընկերության կողմից, իսկ «Ագաթ» ՍՊ ընկերության կողմից որևէ աշխատանք չի կատարվել, փոխարենը «Ագաթ» ՍՊ ընկերության հետ 2015 թվականի դեկտեմբերի 21-ին կնքված և օգտագործված՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հավաստող և իրավունք վերապահող բովանդակությամբ ակնհայտ կեղծ պայմանագիրը միջոց է հանդիսացել Բանկից առանձնապես խոշոր չափերի գումար հափշտակելու համար: Այս դեպքում ևս Բանկին մոլորության մեջ գցելու, կատարվածի կապակցությամբ կասկածներ չառաջացնելու և հետագայում բացահայտվելու հավանականությունը նվազեցնելու համար հիշատակված երկու պայմանագրում պայմանագրերի առարկաները նկարագրվել են հոմանիշ բառերով, բացի այդ, որպես հավելյալ աշխատանք՝ ձևականորեն նշվել է, որ «Ագաթ» ՍՊ ընկերությունը «Visa international և Master Card Worldwide» միջազգային վճարային համակարգերում հավաստագրում անցնելու համար իրականացնելու է նաև հարմարեցման աշխատանքներ, որոնք նույնպես փաստացի չի իրականացրել: 2016 թվականի ապրիլի 15-ին «Ագաթ» ընկերության և Բանկի միջև կազմվել է աշխատանքներն ամբողջ ծավալով կատարված լինելու վերաբերյալ իրավունք վերապահող հանձնման-ընդունման ակնհայտ կեղծ, առանց թվագրման ակտ, որը Բանկի անունից ստորագրել է Կարեն Խաչատրյանը, իսկ «Ագաթ» ՍՊ ընկերության անունից ստորագրել է ընկերության գլխավոր տնօրեն Վյաչեսլավ Վառլամովը, ինչպես նաև ակտը կնիքվել է «Ագաթ» ՍՊ ընկերության կնիքով, որը հանդիսացել և օգտագործվել է որպես միջոց՝ Բանկից առանձնապես խոշոր չափերի գումար հափշտակելու համար:

Նկարագրված խարդախության արդյունքում Ֆարիս Ջալելի Ալ-Մաշրան, Կարեն Խաչատրյանի և Վյաչեսլավ Վառլամովի հետ նախնական համաձայնությամբ, մեկ միասնական դիտավորությամբ, Բանկից հափշտակել է առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր 204.391.185.6 (երկու հարյուր չորս միլիոն

երեք հարյուր իննսունմեկ հազար հարյուր ութսունհինգ ՀՀ դրամ, 6 լումա) ՀՀ դրամին համարժեք 420.000 (չորս հարյուր քսան հազար) ԱՄՆ դոլար (…)»[1]:

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի հոկտեմբերի 8-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Նախնական դատաքննության ընթացքում մեղադրողը հայտնեց, որ ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից 2025 թվականի հուլիսի 14-ին կայացվել է որոշում՝ Վարույթի առարկայական ընդդատության հարցը լուծելու մասին, որով քննարկման առարկա է դարձրել նույնանման փաստական հանգամանքերով գործը քննող դատարանի տիրույթի հարցը և արձանագրել, որ գործը ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:*

Միաժամանակ թե՛ պաշտպանական կողմը, և թե՛ մեղադրանքի կողմը որևէ առարկություն չհայտնեցին գործն ընդդատության Հակակոռուպցիոն դատարան ուղարկելու մասին:

(…)

2023 թվականի մայիսի 29-ին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով, 38-214-րդ հոդվածի 2-րդ մասով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 325-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 325-րդ հոդվածի 2-րդ մասով նախաձեռնվել է թիվ 69114823 քրեական վարույթը, որը նույն օրը միացվել է թիվ 58218118 քրեական վարույթին և նախաքննությունը շարունակվել է թիվ 58218118 համարով:

Նախաքննության մարմնի 2023 թվականի հուլիսի 24-ի որոշմամբ թիվ 58218118 քրեական վարույթից անջատվել է Կարեն Խաչատրյանի կողմից 3 դրվագ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 214-րդ հոդվածի 2-րդ մասով, 325-րդ հոդվածի 2-րդ մասով, և Նելսոն Ստեփանյանի կողմից ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված առերևույթ հանցանքներ կատարելու վերաբերյալ վարույթը: Անջատված վարույթին շնորհվել է 69122723 համարը:

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 58, թերթեր 147-151:

Նախաքննության մարմնի 2023 թվականի ապրիլի 23-ի որոշմամբ թիվ 58218118 քրեական վարույթից անջատվել է Ֆարիս Զալալի Ալ-Մաշրայի կողմից ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված առերևույթ հանցանքներ կատարելու վերաբերյալ վարույթը:

2023 թվականի հուլիսի 20-ին մեղադրյալ Ֆարիս Զալալի Ալ-Մաշրայի նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով (…):

(…)

2023 թվականի օգոստոսի 9-ին Կարեն Խաչատրյանի վերաբերյալ քրեական գործն ուղարկվել է ՀՀ Հակակոռուպցիոն դատարան, իսկ 2025 թվականի մայիսի 14-ին Ֆարիս Զալելի Ալ-Մաշրայի վերաբերյալ քրեական գործը ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան:

Վերոհիշյալ փաստերի հիման վրա Դատարանն արձանագրում է, որ եթե Ֆարիս Զալելի Ալ-Մաշրայի մասով քրեական վարույթը չանջատվեր հիմնական քրեական վարույթից, ապա նրա մեղադրանքի քննությունը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, ընդդատյա կլիներ հենց Հակակոռուպցիոն դատարանին, ուստի քրեադատավարական օրենքի տրամաբանությունից էլ ողջամտորեն ենթադրելի է, որ նույն ենթադրյալ հանցանքի վերաբերյալ խմբի անդամների մեղադրանքները միաժամանակ և ընդհանուր իրավասության, և մասնագիտացված դատարաններին ընդդատյա լինել չեն կարող:

Վերոգրյալի հիման վրա և հաշվի առնելով այն հանգամանքը, որ թիվ ԵԴ1/1691/01/25 քրեական գործով պարզվեց, որ սույն գործն ընդդատյա է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին, գտնում եմ, որ նշված քրեական գործը պետք է ըստ ընդդատության ուղարկել ՀՀ հակակոռուպցիոն դատարան (…)»[2]*:*

7. Հակակոռուպցիոն դատարանի՝ 2025 թվականի հոկտեմբերի 15-ի որոշման համաձայն՝ *«(…) Դատարանը, ուսումնասիրելով քրեական գործի նյութերը, գտնում է, որ թիվ ՀԿԴ/0277/01/25 քրեական գործն ընդդատյա չէ Հակակոռուպցիոն դատարանին և այն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածով*

[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 62, թերթեր 72-80:

սահմանված կարգով անհրաժեշտ է ուղարկել ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին՝ ընդդատության մասին վեճը լուծելու համար:

(…)

Դատարանն արձանագրում է, որ մեղադրյալ Ֆարիս Ջալելի Ալ-Մաշրային վերագրվող՝ 2003 թվականի ապրիլի 18-ի ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մասով (համապատասխանում է 2021 թվականի մայիսի 5-ի ՀՀ քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածի 2-րդ մասին) վարույթը ՀՀ հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա չէ: Ինչ վերաբերում է 2003 թվականի ապրիլի 18-ի ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (համապատասխանում է 2021 թվականի մայիսի 5-ի ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին), ապա նշված հանցանքով վարույթները ՀՀ հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա են բացառապես այն դեպքերում, երբ հանցանքի օբյեկտիվ կողմը կազմող արարքը կատարվել է պաշտոնեական դիրքը (իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը) օգտագործելով:

Վերոշարադրյալի համատեքստում Դատարանն արձանագրում է, որ 2003 թվականի ապրիլի 18-ի ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (համապատասխանում է 2021 թվականի մայիսի 5-ի ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին) ընթացող վարույթի առարկայական ընդդատության հարցը որոշելիս էական նշանակություն ունի անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման փաստական նկարագրությունը, քանի որ այն իր մեջ պետք է ներառի և դրանում պետք է նկարագրվեն մեղսագրվող արարքի բոլոր հատկանիշները, հանցակազմի տարրերը, այն որակյալ դարձնող յուրաքանչյուր հանգամանքը: Ընդ որում, քննությունն իրականացնող դատարանն իրավասու չէ քրեական գործի ընդդատության հարցը որոշելիս դուրս գալ մեղադրյալի նկատմամբ հարուցված հանրային քրեական հետապնդման փաստական նկարագրության սահմաններից, և վերջինիս վերագրել իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով հանցանքի կատարում (նման հանցանքի հանցակցություն) այն դեպքում, երբ վերջինիս ներկայացված

մեղադրանքում նման ձևակերպում առկա չէ, քանի որ դատարանն անխուսափելիորեն դուրս կգա մեղադրյալի նկատմամբ հարուցված հանրային քրեական հետապնդման սահմաններից:

(...) Դատարանն արձանագրում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն իր վարույթում գտնվող թիվ ԵԴ1/1691/01/25 քրեական գործն առարկայական ընդդատությամբ ՀՀ հակակոռուպցիոն դատարան փոխանցելու անհրաժեշտությունը պայմանավորել է նրանով, որ թիվ 58218118 քրեական վարույթով, որից անջատվել է մեղադրյալ Ֆարիս Ջալելի Ալ-Մաշրայի վերաբերյալ վարույթը, քննության առարկա է հանդիսացել ՀՀ քրեական օրենսգրքի հավելվածով սահմանված կոռուպցիոն հանցագործություն, և մեղադրյալի վերաբերյալ վարույթը թիվ 58218118 քրեական վարույթից չանջատելու պարագայում վերջինիս գործը քննելու էր ՀՀ հակակոռուպցիոն դատարանը:

Վերոշարադրյալի համատեքստում Դատարանն նախևառաջ արձանագրում է, որ թիվ 58218118 քրեական վարույթից մեղադրյալներ Կարեն Խաչատրյանի ու Նելսոն Սրեփանյանի վերաբերյալ վարույթն անջատվել է առանձին՝ թիվ 69122723 քրեական վարույթով, և գործն ուղարկվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարան՝ ըստ էության քննության՝ քրեական վարույթով անցնող այլ մեղադրյալների, այդ թվում՝ Ֆարիս Ջալելի Ալ-Մաշրայի՝ քննությունից թաքնվելու հետևանքով: Այսինքն՝ Ֆարիս Ջալելի Ալ-Մաշրայի վերաբերյալ վարույթը ՀՀ հակակառուպցիոն դատարանում իսկզբանե չի քննվել՝ վերջինիս ոչ պատշաճ վարքագծի արդյունքում: Միևնույն ժամանակ Դատարանն արձանագրում է, քրեական վարույթից մաս անջատելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի որոշման իրավաչափության գնահատումը դուրս է քրեական գործի ընդդատությունը որոշելու հարցի փիրույթից, և հակառակի մասին վկայող դատավարական ակտի բացակայության պարագայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի կարգով վարույթից մասի անջատումը պետք է դիտարկել իրավաչափ:

Դատարանն արձանագրում է, որ 2003 թվականի ապրիլի 18-ի ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (...) նախատեսված հանցանքը կարող է դիտարկվել որպես պաշտոնեական դիրքը (իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը)

օգտագործելով կատարված այն դեպքում, երբ հանցանքը դրսևորվել է ծառայողական ենթակայության տակ չգտնվող անձանց նկատմամբ սահմանված կարգով կարգադրիչ լիազորությունները կամ ծառայողական լիազորությունները կամ ծառայողական դիրքից բխող հեղինակությունն օգտագործելու եղանակով: Այս առումով Դատարանը փաստում է, որ ինչպես Ֆարիս Ջալելի Ալ-Մաշրայի, այնպես էլ թիվ 58218118 քրեական վարույթով մյուս մեղադրյալներ Յան Դաշեկի, Վյաչեսլավ Վաղամովի և Վալենտին Բադալյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու որոշումների փաստական հիմքում առկա չէ վերջիններիս վերագրվող ենթադրյալ հանցանքները կոռուպցիոն բնույթի դարձնող՝ վերոշարադրյալ չափանիշին համապատասխանող ձևակերպում: Այսինքն՝ Ֆարիս Ջալելի Ալ-Մաշրայի վերաբերյալ դրվագով թիվ 58218118 քրեական վարույթից թիվ 69117925 քրեական վարույթն անջատելու և այն հասցեագրված մեղադրական եզրակացությամբ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելու պահի դրությամբ կոռուպցիոն որևէ հանցանք թիվ 58218118 քրեական վարույթի առարկան չի կազմել:

Վերոշարադրյալի համատեքստում անդրադառնալով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի նկատառմանն առ այն, որ Ֆարիս Ջալելի Ալ-Մաշրայի վերաբերյալ քրեական վարույթը հիմնական վարույթից չանջատվելու դեպքում վերջինիս մեղադրանքի քննությունն ընդդատյա կլիներ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին՝ Դատարանը վերստին արձանագրում է, որ սկզբնական՝ թիվ 58218118 քրեական վարույթից անջատվել է ոչ թե Ֆարիս Ջալելի Ալ-Մաշրայի, այլ Կարեն Խաչատրյանի և Նելսոն Ստեփանյանի վերաբերյալ վարույթը: Միևնույն ժամանակ Դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, սահմանելով քրեական վարույթները միացնելու և անջատելու հիմքերն ու կարգը, դրանք չի տարանջատում որպես «հիմնական» և «ածանցյալ» վարույթներ, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածով սահմանված կարգով ՀՀ հակակոռուպցիոն դատարանին կարող են ընդդատյա լինել բացառապես ՀՀ քրեական օրենսգրքի հավելված 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթը (այնպիսի վարույթը, որով քննության առարկա է հանդիսանում կոռուպցիոն հանցանք): Այլ

կերպ՝ անջատված վարույթով քննության առարկա է հանդիսանում ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսված կոնկրետ արարք, և տվյալ արարքը սահմանող հանցանքով վարույթի ընդդատությունը ենթակա է որոշման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ քննչական ենթակայությունը (հոդված 181) և դատական վարույթների առարկայական ենթակայությունը (հոդված 260) կանոնակարգող նորմերի պահպանմամբ: Դատարանի գնահատմամբ, հակառակ մեկնաբանությունը հնարավորություն կտա արհեստականորեն շրջանցել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված ընդդատության իմպերատիվ կարգավորումները, ինչը վերջնարդյունքում կարող է հանգեցնել անձի դատական պաշտպանության՝ ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերով երաշխավորված իրավունքի (իր գործն այն դատարանում քննվելու իրավունք, որի ընդդատությանը այն վերապահված է օրենքով) իրացմանը: Այս առումով Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ նման տրամաբանությամբ կարող է ստեղծվել իրավիճակ, երբ ՀՀ հակակոռուպցիոն դատարանը քննի, օրինակ, սպանության, խուլիգանության, առևանգման և նման ակնհայտ ոչ կոռուպցիոն հանցանքներով վարույթներ՝ բացառապես պայմանավորված նրանով, որ ենթադրյալ հանցանքները բացահայտվել և վարույթն անջատվել է ՀՀ քրեական օրենսգրքի՝ կոռուպցիոն հանցանքների ցանկը սահմանող որևէ հանցանք պարունակող վարույթից:

(…) Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ վճռաբեկ դատարանը, թիվ ԳԴ/0007/15/23 վարույթով կայացված որոշմամբ քննության առարկա դարձնելով առարկայական ընդդատության հարցը, իր անհամաձայնությունն է հայտնել Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դիրքորոշմանն առ այն, որ քրեական վարույթը (քրեական գործը) կոռուպցիոն ենթադրյալ հանցանքի մասին վկայող փաստերի հիման վրա հարուցված լինելու հանգամանքն ինքնին բավարար է փաստելու համար, որ վարույթն ընդդատյա է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ թեև քրեական վարույթն իսկզբանե նախաձեռնվել է ՀՀ քրեական օրենսգրքի՝ կոռուպցիոն հանցանք սահմանող հոդվածով (308-րդ հոդվածի 1-ին մաս), սակայն տվյալ հոդվածով մեղադրյալի նկատմամբ հարուցված հանրային քրեական

հետապնդումը դադարեցվել է, իսկ քննությունն ընթացել է ոչ կոռուպցիոն (315-րդ հոդվածի 2-րդ մասով) սահմանված հանցանքով: Տվյալ պայմաններում ՀՀ վճռաբեկ դատարանը հանգել է հետևության, որ վարույթն առարկայական ընդդատությամբ ենթակա է ընդհանուր իրավասության դատարանին, քանի որ փաստացի առկա է եղել կոռուպցիոն հոդվածով հանրային քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում՝ արձանագրելով, որ «հսկող դատախազի հիշյալ որոշումը կայացվելուց հետո (...) քրեական գործի հետագա նախաքննության սահմանները չեն ներառել (...) պաշտոնատար անձի կողմից պաշտոնեական լիազորությունները չարաշահելով համայնքային գույքին վնաս պատճառելու ենթադրյալ դեպքի քննությունը: Հետևաբար, (...) քրեական գործով նախաքննությունը չի կատարվել ՀՀ գործող քրեական օրենսգրքի հավելված 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթով: Նման պայմաններում (...) քրեական գործի՝ ենթադրյալ կոռուպցիոն հանցանքի փաստի առթիվ հարուցված լինելու հանգամանքը, առարկայական ընդդատության հարցի լուծման տեսանկյունից, օբյեկտիվորեն չի կարող քրեադատավարական որոշիչ նշանակություն ունեցող գործոն դիտարկվել» (...): Այսինքն՝ ՀՀ վճռաբեկ դատարանն առանցքային է համարել տվյալ պահի դրությամբ քրեական վարույթի քննության առարկա հանդիսացող ենթադրյալ հանցանքի բնույթը:

ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ԳԴ/0007/15/23 վարույթով արտահայտված վերոշարադրյալ իրավական դիրքորոշումն առ այն, որ քրեական գործի՝ ենթադրյալ կոռուպցիոն հանցանքի փաստի առթիվ հարուցված լինելու հանգամանքը, առարկայական ընդդատության հարցի լուծման տեսանկյունից, օբյեկտիվորեն չի կարող քրեադատավարական որոշիչ նշանակություն ունեցող գործոն դիտարկվել, կիրառելի է նաև Ֆարիս Ջալելի Ալ-Մաշրայի վերաբերյալ քննվող թիվ ԵԴ1/1691/01/25 (ՀԿԴ/0277/01/25) քրեական գործի առարկայական ընդդատությունը որոշելիս:

Այսպես, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանն իր վարույթում գտնվող թիվ ԵԴ1/1691/01/25 քրեական գործն առարկայական ընդդատությամբ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա լինելու դիրքորոշումը պայմանավորել է նրանով, որ Ֆարիս Ջալելի Ալ-Մաշրայի վերաբերյալ վարույթն անջատվել է կոռուպցիոն վարույթից, այնինչ ՀՀ վճռաբեկ

դատարանի վերը վկայակոչված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման տրամաբանությամբ վարույթի առարկայական ընդդատության հարցը չի կարող կանխորոշվել այն հանգամանքով, որ վարույթով, որից անջատվել է քննության առարկա վարույթը, ինչ-որ ժամանակահատվածում քննության առարկա է հանդիսացել նաև ենթադրյալ կոռուպցիոն հանցանք:

Ի հիմնավորումն Ֆարիս Ջալելի Ալ-Մաշրայի վերաբերյալ վարույթով քննության առարկա հանդիսացող ենթադրյալ հանցանքի՝ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա չլինելու փաստի՝ Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ քրեական գործի նյութերում առկա չէ ՀՀ գլխավոր դատախազի որոշում՝ թիվ 69117925 քրեական վարույթով նախաքննությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված հիմքով ՀՀ քննչական կոմիտեին հանձնարարելու վերաբերյալ, մինչդեռ նախաքննությունը տվյալ վարույթով կատարվել և մեղադրական եզրակացությունը կազմվել է ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության կողմից:

(…) Դատարանը, հաշվի առնելով քրեական գործով քննության առարկա հանդիսացող ենթադրյալ հանցանքի բնույթը և մինչդատական վարույթում մեղադրյալին մեղսագրված արարքի քրեաիրավական որակումը, գտնում է, որ թիվ ՀԿԴ/0277/01/25 (ԵԴ1/1691/01/25) քրեական գործն ընդդատյա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին՝ հաշվի առնելով, որ այն չի հանդիսանում ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքի վերաբերյալ վարույթ, ուստի անհրաժեշտ է թիվ ՀԿԴ/0277/01/25 քրեական գործն ուղարկել ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին՝ ընդդատության վերաբերյալ վեճը լուծելու համար (…)»[3]:

8. 2023 թվականի օգոստոսի 11-ին Հակակոռուպցիոն դատարանը որոշում է կայացրել Կարեն Խաչիկի Խաչատրյանի վերաբերյալ՝ 3 (երեք) դրվագ 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 214-րդ հոդվածի 2-րդ մասով, 3 (երեք) դրվագ 325-րդ հոդվածի 2-րդ մասով և Նելսոն Աղասու

[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 63, թերթեր 15-20:

Ստեփանյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 325-րդ հոդվածի 2-րդ մասով թիվ ՀԿԴ/0165/01/23 քրեական վարույթը ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին[4]:

Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.

9. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/1691/01/25 (ՀԿԴ/0277/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

10. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

11. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

11.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, «*օրենքի հիման վրա ստեղծված դատարան*» հասկացությունը մեկնաբանելիս նշել է. «*Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ*»[5]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ. «*Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ*

[4] Տե՛ս *www.datalex.am* Դատական տեղեկատվական համակարգ, թիվ *ՀԿԴ/0165/01/23* քրեական վարույթը:

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»[6]:

12. Վճռաբեկ դատարանն անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հիմնարար նշանակության վերաբերյալ իրավական դիրքորոշում է ձևավորել *Գևորգ Հարությունյանի* որոշմամբ[7]:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարաններին (այսուհետ՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան) ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, ինչպես նաև դատական երաշխիքների բոլոր վարույթները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ, այդ թվում՝ դատական երաշխիքների վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1.Նախնական դատաքննության ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այդ որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(…)

5. Վարույթն ըստ ընդդատության ուղացած հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:

(…)

8. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահները վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա

---

[6] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

[7] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

ժամկետում վերջնականապես լուծում են վարույթի առարկայական ընդդատության հարցը՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան»:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, փաստելով, որ քրեական վարույթից մեղադրյալ Ֆարիս Ջալելի Ալ-Մաշտայի վերաբերյալ մասն անջատված չլինելու դեպքում վերջինիս մեղադրանքի քննությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընդդատյա կլիներ Հակակոռուպցիոն դատարանին, որոշում է կայացրել թիվ ԵԴ1/1691/01/25 (ՀԿԴ/0277/01/25) քրեական վարույթը Հակակոռուպցիոն դատարան ուղարկելու մասին[8]:

- Հակակոռուպցիոն դատարանը, արձանագրելով, որ Ֆարիս Ջալելի Ալ-Մաշտային ներկայացված մեղադրանքի համաձայն՝ վերջինիս կողմից ենթադրյալ հանցանքը չի կատարվել *«պաշտոնեական դիրքը»* կամ *իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը»* օգտագործելով, գտել է, որ սույն քրեական վարույթն ընդդատյա չէ Հակակոռուպցիոն դատարանին[9]:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ սույն վարույթի նյութերի, այդ թվում, մեղադրական եզրակացության[10] ուսումնասիրությունից հետևում է, որ Ֆարիս Ջալելի Ալ-Մաշտայի վերաբերյալ թիվ 69117925 քրեական վարույթն անջատվել է կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ թիվ 58218118 վարույթից, և վերջինիս վերագրվում է Կ.Խաչատրյանի և Վ.Վառլամովի հետ նախնական համաձայնությամբ իրավունք վերապահող պաշտոնական փաստաթղթեր կեղծելով և դրանք

[8] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[9] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[10] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 61, թերթեր 86-155:

օգտագործելով խարդախությամբ առանձնապես խոշոր չափերով գույքի ենթադրյալ հափշտակություն: Վերոշարադրյալը հիմք է տալիս փաստելու, որ Ֆարիս Ջալելի Ալ-Մաշտային ներկայացված մեղադրանքը փաստական հանգամանքներով անմիջականորեն կապված է Հակակոռուպցիոն դատարանում քննվող թիվ ՀԿԴ/0165/01/23 քրեական վարույթով մեղադրյալ *Կարեն Խաչատրյանի* մեղադրանքի հետ[11]:

Նման պայմաններում պետք է փաստել, որ ԵԴ1/1691/01/25 (ՀԿԴ/0277/01/25) և ՀԿԴ/0165/01/23 քրեական վարույթներն իրարից անջատ քննվելու պարագայում չի բացառվում, որ նույն փաստական հանգամանքներով կկայացվեն երկու՝ իրար հակասող եզրափակիչ դատական ակտեր, ինչն էլ իր հերթին կհանգեցնի անորոշության, ինչպես նաև իր ազդեցությունն ունենալ դատավարության արդարացիության՝ վարույթի պատշաճ և համակողմանի քննության վրա:

Հետևաբար, հաշվի առնելով արդարադատության շահը, այդ թվում՝ վարույթի պատշաճ և համակողմանի քննությունն ապահովելու անհրաժեշտությունը, գտնում ենք, որ սույն քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

16. Վերոշարադրյալը հիմք է տալիս փաստելու, որ Հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/1691/01/25 (ՀԿԴ/0277/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, հիմնավոր չէ:

17. Հետևաբար, գտնում ենք, որ թիվ ԵԴ1/1691/01/25 (ՀԿԴ/0277/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 8-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

Ֆարիս Ջալելի Ալ-Մաշտայի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ

[11] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

հոդվածի 2-րդ մասով թիվ ԵԴ1/1691/01/25 (ՀԿԴ/0277/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ